ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 818-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2025 թվականի N _____Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 818-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 818-Լ որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

- 20-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ նախադասությունով.

«Ընդ որում՝

- գյուղացիական տնտեսություններում բուծվող ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի ականջապիտակի նույնականացման անհատական համարն ամրացվում է անվճար.
- իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին պատկանող տնտեսություններում բուծվող ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի ականջապիտակի նույնականացման անհատական համարն ամրացվում է վճարովի։ Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են՝ ականջապիտակների ձեռքբերման միավորի գինը հետ վերադարձնել պետական բյուջե։ Միջոցառումն իրականացվում է վճարումը

հավաստող փաստաթղթի լուսապատճենը անասնաբույժին տրամադրելուց հետո և այն պահվում է կազմակերպությունում։».

- 32-րդ կետի 2-րդ ենթակետում «անձինք» բառից հետո լրացնել «, անհատ ձեռնարկատերերը» բառերը.
- 32-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի արտահանման դեպքում, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ հաստատված N 8 ձևի համապատասխանության տեղեկանքի տրամադրումը կենդանիների արտահանմամբ զբաղվող ֆիզիկական, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են՝ ծրագրի իրականացման համար նախատեսված ծախսը՝ ականջապիտակների ձեռքբերման միավորի գինը հետ վերադարձնել պետական բյուջե։ Տեսչական մարմինը N 8 ձևի համապատասխանության տեղեկանքը տրամադրում է վճարումը հավաստող փաստաթղթի առակայության դեպքում։ Վճարումը հավաստող փաստաթղթի լուսապատճենը պահվում է տեսչական մարմնում.».

- 35-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ նախադասությունով.

«Արտահանման դեպքում, կենդանիների արտահանմամբ զբաղվող ֆիզիկական, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են՝ ծրագրի իրականացման համար նախատեսված ծախսը՝ ականջապիտակների ձեռքբերման միավորի գինը հետ վերադարձնել պետական բյուջե։ Տեսչական մարմինն առողջության կամ անասնաբուժական սերտիֆիկատները կամ N 8 ձևի համապատասխանության տեղեկանքը տրամադրում է վճարումը հավաստող փաստաթղթի առակայության դեպքում։ Վճարումը հավաստող փաստաթղթի լուսապատճենը պահվում է տեսչական մարմնում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան